Այդ զեկուցումից պարզվեց, որ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի ճանաչման յայտարարութիւնից յետոյ Բաթումի ճակատում, մարտ 29-ին, կնքուել էր զինադադար, որից յետոյ Բաթումի բերդապետի մօտ եկել էր Թիւրք առաջապահ զօրամասի կողմից մի սպայ և պահանջել՝ մինչև մարտ 31-ի կէսօրը, քաղաքը յանձնել Թիւրքերին՝ հակառակ պարագային սպառնալով դրաւել զէնքի ուժով: Եւ որովհետև բերդապետը պատասխանել էր, թէ առանց կառավարութեան հրամանի չի կարող կատարել ներկայացուած պահանջը, իսկ կառավարութիւնն էլ բերդապետի հեռագիրը ստացել էր միայն մարտ 31-ի ժամը 11-ին, Բաթումի ճակատում վերսկսուել էին կռիւները, և Թիւրքերը շարժուել էին Բաթումի վրա:

Տալով այս տեղեկութիւնները՝ վարչապետ Գեղեչկորին յայտարարեց, որ կառավարութիւնը չի կարող կատարել Թիւրքերի պահանջը. «Կառավարութիւնը կարծում է, որ անդրկովկասեան դեմոկրատիայի ազատատենչ ոգին տակաւին մարած չէ, որ դեռ «չոր է վառօղը վառօղամանում» և որ թէև մենք թոյլ ենք, բայց դեռ այնքան թոյլ չենք, որ դառնանք ստրուկ. (Ձայներ՝ «ճիշտ է», ծափեր): Ուստի և կարծում ենք, որ Բրեստ-Լիտովսկի դաշնագիրն ընդունելը պիտի նշանակէր, որ Անդրկովկասը, իբրև անկախ հանրապետութիւն, դադարի գոյութիւն ունենալուց և պիտի դառնայ Թիւրքական կայսրութեան մէկ նահանգ (ձայներ՝ «ճիշտ է», «ճիշտ է»): Ես կարծում եմ, որ այն կառավարութիւնը, որ վայելում է անդրկովկասեան դեմոկրատիայի իրաւատէր ներկայացուցչութիւնը հանդիսացող Սէյմի վստահութիւնը, չի կարող ընդունել այդպիսի խայտառակութիւն. (Ձայներ՝ «ճիշտ է». ծափեր): Ես պէտք է ասեմ, որ կառավարութիւնը ձեռք կառնէ բոլոր միջոցները, կը թափէ ամէն ճիգ, կը հաւաքէ բոլոր ուժերն ու բովանդակ զօրութիւնը, որ տայ արժանաւոր հակահարուած այն բռնատենչ յաւակնութեան, որ դալիս է Թիւրք կառավարութեան կողմից. (Ձայներ՝ «ճիշտ է». ծափեր):

Կառավարութեան ռազմաշունչ յայտարարութիւնները ջերմ արձագանգ գտան Սէյմի դահլիճում: Գեղեչկորիից յետոյ, յանուն սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի, մի ռազմաշունչ ճառ էլ խօսեց Ծերեթելին. նա ևս հրաւէր կարդաց դիմադրութեան, կուի «Թիւրքական իմպերիալիզմի» դէմ. «Բրեստ-Լիտովսկում թելադրուեց յեղափոխական Ռուսաստանի մահավճիռը, և այդ մահավճիռը մենք չենք ստորագրի մեր հայրենիքի համար. (բուռն, երկարատև ծափեր)»: «Թիւրքիան ուզում է խեղդել անդրկովկասեան դեմոկրատիան: Եւ ահա հասնում է ժամը, երբ մենք զէնքով պէտք է պաշտպանենք անդրկովկասեան ժողովուրդների ազատ զարգացումն ու գոյութիւնը»: Եւ «մենք համոզուած ենք, որ այդ կուում մենք կարող ենք յաղթել միայն այն ժամանակ, եթէ թիկունքից չլինեն դաւաղիր հարուածներ. (երկարատեւ ծափեր)»:

Ակնարկը պարզ էր. թիկունքից «դաւաղիր հարուածը» կարող էր դալ միայն կովկասեան մահմեդականներից: Եւ Մուսաւաթի ներկայացուցիչը վերցրեց Ծերեթելիի նետած ձեռնոցը: «Պատերազմի հարցում, ասաց նա, դուք ինքներդ էլ լաւ գիտէք, մահմեդական դեմոկրատիայի դիրքը բացառիկ է՝ նախ, որովհետև մինչև այժմ նա զինուորական պարտականութիւններ չի կատարել, երկրորդ՝ ի հետեւանս Թիւրքիայի հետ ունեցած կրօնական կապի, որը թոյլ չի տալիս նրան գործօն մասնակցութիւն ունենալ Թիւրքիայի դէմ վարուող պատերազմական գործողութիւններին: Այս խնդրի վրա էլ մենք